

ՀՈԳԵՎՈՐ ԽՈՀԵՐ
ՄԵԾ ՊԱՀՈՑ ԱՌԹԻՎ

Պատարագվող Գառն Աստուծո,
Վասն մարդկան ամենայնի՝
Կենդանյաց և հանգուցելոց,
Ընդ ամենայն ժամանակի:

Խունկ քաղցրաբույր աշխարհ լցնող,
Սիրո անմար վառ կրակում,
Կամուրջ՝ կապող երկինքն երկրի
Եվ ծիածան խաղաղության:

Անեծքը հին, մեր հայրերի
Սև խարանով դրոշմված,
Մեր ճակատից առհավական
Իսպա՛ռ ջնջիր քո սուրբ արյամբ:

Թեթևացրո՛ւ բեռն իմ մեղքի,
Շնորհաձիր հպմամբ ձեռքի,
Որ մաքրությամբ ներկայանամ,
Քո սուրբ տեսքին արժանանամ:

*
* *

Դո՛ւ՝ Գառն անարատ և զոհ գերագույն,
Վասն քավության թափված թանկ արյուն,
Հեղվի՛ր վերստին և սրբագործի՛ր,
Իմ ծանրածանր մեղքերը քավի՛ր:

Տե՛ր, ինձ շնորհիր վայելքն անբասիր,
Մարմնո և արյան քո հաղորդության,
Եվ պատարագվող քո զոհողությամբ
Լցվեմ հոգևին, ոգեղինանամ:

Կենարար սիրո բոցը հրդեհիր,
Անհաղորդ սրտիս խոր գավիթներում,
Փշրի՛ր սառույցը իմ մեռելության,
Հաստատիր հավատս հանդեպ մարդկության:

Դո՛ւ՝ լո՛ւյս առաջին, մա՛յր իմ գոյության,
Լո՛ւյս անծայրածիր, լո՛ւյս ճշմարտության,

Հավերժական լո՛ւյս անսահմանափակ,
Անբիծ, անսքող, անարատ, հստակ։

Բա՛ց շամանդաղը աչքիս կուրացյալ,
Նայող՝ չտեսնող, տեսնող՝ չզգացող,
Որ տեսնեմ, զգամ անիմանալին,
Հոգու աչքերով փարվեմ Էությանդ։

*
* *

Սրբերի սուրբն ես, անաղարտ, մաքուր,
Մեղավոր անձիս վերքերն ամոքիր,
Չար խորհուրդներից իմ միտքն ազատիր,
Մաքրության քողով Դու ինձ պարուրիր։

Թշնամու խոցող նետերից փրկի՛ր,
Լեզվից բամբասող ինձ հեռո՛ւ պահիր,
Անձն իմ զրպարտված Դու արդարացրո՛ւ,
Լույսն արդարության իմ մեջ փայլեցրո՛ւ։

Դարձրո՛ւ ինձ ժառանգ հոգևոր գանձին
Մեր սուրբ հայրերի առաքինության,
Բռնի՛ր իմ թևից, ոտս ուղղիր հողդողդ,
Որ չսայթաքեմ, կորչեմ անհաղորդ։

Տե՛ր, կա՞ միթե մարդ անմեղանչական,
Մեզ է հետևում մեղքն իբրև դարան,
Դո՛ւ՝ լույս անստվեր, անբիծ, անխափան,
Եվ Քո մոտ չկա նշույլ թերության։

*
* *

Աղոթում եմ Քեզ, վասն մեր նեղչի,
Նենգ դարանակալ, չար ախոյանի,
Որ հաճախ է դեմքն իր բացահայտում,
Եղբայրների մեջ խռովք հարուցում։

Տե՛ր, օժտի՛ր բոլորիս միաբանությամբ,
Լցրո՛ւ մեր սրտերն Քո զոհողությամբ,
Թույլ մի տուր հանկարծ սայթաքենք, ընկնենք,
Եվ կորչենք հավետ քեզնից անժառանգ։

Տո՛ւր մեզ, Տե՛ր, սիրույդ՝ բաժակն քաղցրության,
Համեմիր շրթներն մեր իմաստությամբ,
Խոսքիդ զորության շնչով տոգորիր,
Քո անշեջ սիրո բոցով մեզ թրծիր։

Դարավոր վանքի կամարների տակ,
Մեր նախնյաց ուխտին բոլորով գիտակ,
Ժառանգորդն արա շնորհացդ անպարփակ,
Որ հասնենք պսակիդ՝ ուխտով անսայթաք։

ՆԵՐՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ